ԱՆԻ ՆԵՐՍԵՍՅԱՆ

# ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՆՏՐՏՈՒՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԸ ՀՐԵԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i63.77*

**Ամփոփում**

Հետևյալ հոդվածն անդրադառնում է ինքնության փնտրտուքի գրականությանը և էկզիստենցիալիզմին: Մենք քննարկում ենք մարդու իրական գոյության բացահայտման խնդիրը, որն առավելապես դրսևորվում է սահմանային իրադրություններում: Ժողովրդի և ազգի բոլոր մտավոր և հոգևոր ստեղծագործությունների սկզբնաղբյուրն է ցեղը, որը հենց կյանքի պահպանողն է ու ղարգացնողը: Առանց ցեղի ինքնատիպության չի կարող լինել լինել յուրահատուկ և յուրօրինակ արվեստ: Եվ հենց ցեղի հանդեպ ունեցած պարտավորվածությունն ու գենետիկ արժեքներն են ձևավորել ու շարունակում կերտել հրեա- ամերիկյան գրականությունը: Ամերիկյան գրականության մտքի արդիականության հիմնաքարը թերևս տարբեր ազգությունների մշակույթների համախումբն է: Համաշխարհային գրականության մեջ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում երկու մշակույթներ ներառող գրականությունը, որտեղ մեկը ստիպողական կնիքի արդյունք է: Այս գրականության թեման չի սահմանափակվում գենի, ցեղի կամ մշակույթի մասին լինելով, այն հիմնականում այն հակահարվածների մասին է, որոնք ստանում են մեկ ազգի ներկայացուցիչները մեկ այլ՝ օտար երկրում ապրելիս: Էկզիստենցյալ գրականության հերոսները սահմանային իրավիճակների կրողներն են: Հոլոքոստը հենց այդ սահմանային իրադրությունն է հրեա ժողովրդի համար, որը կանգնեցնում է հրեաներին ինքնության կորստի, փնտրտուքի և ինքնության պահպանման խնդիրների առջև:

Այսպիսով, անհատի ինքնության որոնման գրականությունը փորձում է ճանապարհ հարթել դեպի հոգեկան և հոգեբանական ազատություն: Ինքնության ճանաչման և ներքին ազատության խնդիրները արծարծող գրականությունն անմիջականորեն կապված է էկզիստենցյալ փիլիսոփայության, ինչպես նաև էկզիստենցիալ գրականության դրույթների հետ, որի անմիջական կրողն է հրեա- ամերիկյան գրականությունը:

**Բանալի բառեր և արտահայտություններ**. ինքնության փնտրտուք, էկզիստենցիալիզմ, հոլոքոստ, ազատություն, փիլիսոփայություն, գրականություն, գոյություն, անհատ, հասարակություն, կյանք:

## Ներածություն

Ինքնության փնտրտուքի գրականության մարդը ապրում է առօրյա, երկիմաստությամբ և անորոշությամբ լի մի աշխարհում, որտեղ նա կարող է կորցնել ինքն իրեն: Նմանատիպ ինքնության փնտրտուքի ճանապարհին է կանգնած հրեա ժողովուրդը, որն ապրում է էկզիստենցիալ պայքար՝ սեփական ինքնության և օտար երկրում ձուլվելու հակադիր բևեռներին բախվելով: Գերմանացի փիլիսոփա Հայդեգերը տարբերակում է մարդկային գոյության երկու եղանակ՝ անիսկական և իսկական: Անիսկական է այն կեցությունը, երբ մարդը, ամբողջությամբ թաղվելով առօրյա հոգսերի մեջ, ենթարկվելով իրերի և հանգամանքների իշխանությանը, ապրելով ուրիշների նման, չի մտածում մահվան, իր վերջավոր լինելու մասին: Դա օտարված, իր անհատականությունը կորցրած, ցանկացած ուրիշով փոխարինելի մարդն է: Իսկական է այն կեցությունը, երբ մարդը հանդես է գալիս որպես իր պատմականությունը և ազատությունը գիտակցող էակ: Իսկական գոյությունը սկսվում է այն պահից, երբ մարդը զգում է «մետաֆիզիկական» վախ ոչնչի կամ մահվան հանդեպ: Վախի միջոցով մարդը բացահայտում է իր գոյության խորհուրդը, ձեռք բերում իսկական ազատություն (8): Այս պարագայում կարող ենք փաստել, որ Հայդեգերի նշած դրույթները համատեղ առկա են հրեա-ամերիկյան գրականության մեջ, որտեղ համաձայն առաջին դրույթի՝ նրանց գոյությունը կարծես թե համաձույլ է այլ մշակույթին, իսկ մյուս պարագայում՝ հստակորեն գիտակցում է սեփական ինքնության կարևորությունը:

## Մեթոդաբանությունը

Ինքնության փնտրտուքի խնդիրը և Էկզիստենցիալիզմը հրեա-ամերիկյան գրականության համատեքստում հոդվածի ստեղծման հիմքում ընկած է ուսումնասիրությունը: Հաշվի է առնվել ժամանակաշրջանը, առկա վերլուծական գրականությունը, կատարվել են նաև սեփական դիտարկումներ և վերլուծություններ: Արդյունքում առկա հետազոտությունները համատեղվել են և ստեղծվել է քննվող հոդվածը:

## Քննարկում

Մարդու իսկական գոյությունը բացահայտվում է, այսպես կոչված, սահմանային իրադրություններում: Մարդը մշտապես գտնվում է որոշակի իրավիճակների մեջ, սակայն կան վիճակներ, ինչպիսիք են՝ վախը, մեղքը, պայքարը, տառապանքը և այլն, որոնք մարդուն ստիպում են խորհել սեփական կեցության իմաստի և կոչումի մասին: Սահմանային իրադրություններում մարդը դուրս է գալիս առօրյա կյանքի սահմաններից և հաղորդակցվում բացարձակ կեցության, տրանսցենդենտալ ոլորտի հետ:

Հենց այս կեցության տրանսցենդենտալ ոլորտի հետ է բախվում հետզաղութային գրականությունը, որի հերոսները սահմանային իրավիճակների անմիջական կրողներն են:

Ինչպես յուրաքանչյուր անհատ, այնպես էլ ցեղը ունի իր սեփական հոգեբանությունն ու նկարագիրը, իր սեփական բարքերն ու ապրումները: Այս տեսակետով էլ պետք էր հոգ տանել լատինամերիկացու գենի մաքրության մասին: Ցեղը որքան շատ ինքնահատուկ և յուրօրինակ ժառանգներ ունի, այնքան ավելի քաղաքակրթված ու առաջադեմ է, ստեղծագործող, պատմաշատ ու հաղթաշահ: Ցեղը իր հավաքական մեծությամբ չէ, որ հզոր է և արի, կամ մեծագործ ու անվանի, այլ որակական խտացյալ արժեքներով ու հստակություններով:

Ցեղն է սկզբնաղբյուրը ժողովրդի ու ազգի բոլոր մտավոր և հոգևոր ստեղծագործությունների: Ցեղն է ժողովրդի կյանքը պահպանողն ու զարգացնողը: Առանց ցեղային ինքնատիպության չկա ինքնահատուկ և ինքնադրոշմ արվեստ կամ այլ ստեղծագործություն: Ժողովրդի և ազգի մեջ որքան զորավոր են ցեղն ու ցեղայինը, այնքան առանձնահատուկ է, գունագեղ ու գրավիչ է ամեն ստեղծագործություն: Եվ հենց ցեղի հանդեպ պարտավորվածությունն ու գենային արժեքներն են, որ ձևավորում են հրեա-ամերիկյան գրականությունը:

Ամերիկյան գրականության մտքի արդիականությունն այն է, որ ժամանակակից գրականության քննադատությունը զարգանում է հոգնակիացման քննադատական մտքի և տարբեր ազգությունների մշակույթների հենքի վրա: Այնուամենայնիվ անժխտելի է այն փաստը, որ համաշխարհային գրականության մեջ իրենց տեղն ունեն ինքնությունը որոշակիորեն կորցրած գրականություններ, որոնք տրավմատիկ մշակութային արժեք են ներկայացնում: Սա մի այնպիսի մշակույթ է, որում ակամայից միախառնվում են երկու մշակույթներ, որոնցից մեկը ստիպողական կնիքի արդյունք է: Նմանատիպ գրականության մեջ կա անմիջական պատճառահետևանքային ցավալի արդյունք: Այս գրականության ներկայացուցիչները խոսում են ոչ միայն իրենց գենի, ցեղի կամ մշակույթի մասին, այլ նաև այն հակահարվածների մասին, որոնք ստանում են օտար երկրում ապրելիս և որոնք բխում են իրենց ազգությունից: Հրեա-ամերիկյան գրականության ներկայացուցիչները, իրենց մեջ կրելով սեփական ազգության լեզուն, իրենց ստեղծագործությունները գրում են անգլերերենով՝ որպես աշխարհաճանաչ լեզու, որն էլ կնպաստի իրենց խնդիրների լուսաբանմանը:

Անհատի ինքնության որոնման գրականությունը փորձում է ճանապարհ հարթել դեպի հոգեկան և հոգեբանական ազատության: Այս ազատության համար պայքարը հիմնականում սկսվեց քսաներորդ դարի

երկրորդ կեսերին: Եվ հարկ է նշել, որ եթե դրաման և պոեզիան էին սկզբնական շրջանում կարևորագույն դեր կատարում, ապա հետագայում վեպի և դրամայի ժանրերն էին, որ դարձան այս պայքարի հիմնական զենքը:

Այն, ինչ անում էին հրեական ինքնությունը որոնող գրականության ներկայացուցիչները այնքան կարևոր էր, որքան կարևոր էր այդ ազատության համար պայքարողների և ակտիվիստների դերը:

Ինքնության ճանաչման և ներքին ազատության խնդիրներ արծարծող գրականությունն անմիջապես կապված է էկզիստենցիալ փիլիսոփայության, ինչպես նաև էկզիստենցիալ գրականության դրույթների հետ: Հրեա-ամերիկյան գրականությունը միանշանակ առնչվում է էկզիստենցիալ փիլիսոփայության և գրականության հետ, քանի որ դրանում գրողները մեծ մասամբ պատկերում են իրենց գոյության սպառնալիքների, վտանգների, անհանգստությունների մասին, որոնց գոյապահպանական լուծումները տրվում են իրենց երկրից դուրս մեկ այլ տեղ, տվյալ պարագայում՝ ԱՄՆ-ում: Նրանք անընդհատ գտնվում են երկու աշխարհների անորոշության սահմանագծին՝ կորելով սեփական ինքնության պահպանման դժվարությունների և օտար երկրի հասարակության մեջ ձուլվելու վախերում: Ահա այդ է պատճառը, որ հրեա-ամերիկյան գրականությունը, անկախ իր կամքից, անընդհատական էկզիստենցիալ գոյապայքարի մեջ է և միանշանակ արծարծում է էկզիստենցիալ գաղափարներն ու փիլիսոփայությանն առնչվող կարևորագույն հարցերը:

Էկզիստենցիալիստական փիլիսոփայության ձևավորման վրա մեծ ազդեցություն են ունեցել երեք ուսմունք՝ Ս.Կիերկեգորի փիլիսոփայությունը, «կյանքի փիլիսոփայությունը», հատկապես Ֆ.Նիցշեն և Է.Հուսեռլի ֆենոմենոլոգիան: Ս. Կիերկեգորից Էկզիստենցիալիզմը փոխառել է Էկզիստենցիա և Էկզիստենցիալ մտածողության գաղափարը: Էկզիստենցիան՝ մարդկային գոյությունը, օբյեկտ չէ, հետևաբար հնարավոր չէ նրա ռացիոնալ ճանաչողությունը (6): Կիերկեգորի կարծիքով՝ եթե բանական իմացությունը վերացական է և անդեմ, ապա էկզիստենցիալ մտածողությունը, կապված լինելով մարդու ներաշխարհի հետ, կոնկրետ անհատական գիտելիք է: Բանականությունը չի կարող թափանցել մարդկային գոյության մեջ, որովհետև վերջինս դուրս է գտնվում բանականության իշխանությունից: «Կյանքի փիլիսոփայությունից» էկզիստենցիալիզմը փոխառել է բանականության մասին այն պատկերացումը, թե դա պատկանում է ոչ թե մարդու անհատական գոյությանը, այլ նրա հոտային բնությանը, ուստի և արտահայտում է մարդու մեջ եղած անդեմը և վերացականը: Գիտակցության ֆենոմենները

ուսումնասիրող Հուսեռլի ֆենոմենոլոգիական մեթոդը էկզիստենցիալիզմը օգտագործում է՝ վերլուծելու մարդկային գոյության կառուցվածքը:

Էկզիստենցիալիստական փիլիսոփայման ելակետը էկզիստենցիա՝ մարդկային գոյություն, հասկացությունն է: Էկզիստենցիան այն է, ինչ երբեք չի դառնում օբյեկտ: Իսկ քանի որ ճանաչել կարելի է միայն այն, ինչ օբյեկտ է, ուստի էկզիստենցիան չի կարող դառնալ գիտական, ռացիոնալ ճանաչողության առարկա: Էկզիստենցիան զուտ սուբյեկտիվություն է, ինքն իր համար գոյություն, որը մտածում է, տառապում, սիրում և ընդվզում (2): Էկզիստենցիան կեցություն-գիտակցություն է, որովհետև կեցությունը (աշխարհը) գոյություն ունի միայն որպես կեցություն գիտակցության մեջ: Գիտակցությունը և աշխարհը գոյություն ունեն միաժամանակ. առանց սուբյեկտի չկա և չի կարող լինել օբյեկտ: Այսինքն՝ արտաքին աշխարհը գոյություն ունի այնքանով, որքանով ընկալվում և գիտակցվում է սուբյեկտի կողմից: Սուբյեկտի շնորհիվ է, ըստ Հայդեգերի, աշխարհը իմաստավորվում, որոշակիանում և ոչնչից վերածվում ինչ-որ բանի: Ամեն իմաստից զուրկ կլիներ հարցնել, գրում է Սարտրը, թե ինչպիսի՞ն է եղել աշխարհը մինչև սուբյեկտի հանդես գալը:

Էկզիստենցիալիզմը ելնում է այն մտքից, որ մարդու գոյությունը նախորդում է նրա էությանը: Օրինակ, երբ մարդն ուզում է որևէ իր պատրաստել, նախապես իր մտքի մեջ ստեղծում է այդ իրի գաղափար-պատկերը: Նա գիտի, թե այդ իրը ինչի համար է ստեղծում: Ուստի կարող ենք ասել, որ իրի էությունը նախորդում է նրա գոյությանը: Դասական, ռացիոնալիստական փիլիսոփայությունը նույնպես ընդունում է, որ մարդու էությունը նախորդում է նրա գոյությանը, որ գոյություն ունի ընդհանուր «մարդկային բնություն» առանձին մարդկանց մեջ: Մինչդեռ, ըստ էկզիստենցիալիզմի, մարդը իր էությունը ձեռք է բերում գոյությունից հետո, այսինքն՝ ժամանակի ընթացքում է ինքն իրեն ստեղծում: Մարդու էությունն այն է, ինչ ինքն իրենից ստեղծում է: Մարդը մի էակ է, որն ուղղված է ապագային և գիտակցում է, որ ինքը նախագիծ է: Այսպիսով, էկզիստենցիալիզմը մարդուն հանձնում է նրա կեցության տնօրինությունը և նրան պատասխանատու դարձնում իր հետագա գոյության համար:

Էկզիստենցիան բնութագրվում է որպես վերջավոր, պատմական և իրադրային գոյություն: Մարդու պատմականությունը դրսևորվում է այն բանում, որ նա «նետված է որոշակի իրադրության մեջ և գիտակցում է իր մահկանացու, վերջավոր լինելը: Աշխարհում մարդը միակն է, որին բնորոշ է ժամանակի և կեցության մասին մտածելը: Հայդեգերը մարդկային գոյությունը դիտարկում է ժամանակային կառուցվածքի տեսանկյունից և դա անվանում է «հոգս»: «Հոգսը»՝ որպես մտահոգված կեցության միասնական կառուցվածք, բաղկացած է երեք պահից՝ ա) «աշխարհում

կեցություն կամ անցյալ ժամանակ, որը Հայդեգերը բնորոշում է որպես լքվածություն: Էկզիստենցիան հայտնվում է մի աշխարհում, որը արդեն կառուցված է ուրիշների կողմից: բ) ժամանակից առաջ անցնելը կամ ապագան, որը բնորոշվում է որպես «նախագիծ»: Մարդը մշտապես «փախչում է ինքն իրենից, հաղթահարում ինքն իրեն կամ իրեն նախագծում: գ) Գոյություն ունեցողին առընթեր կեցություն կամ ներկա, որը Հայդեգերը բնորոշում է որպես «դատապարտվածություն» իրերին (1):

Ինչպես արդեն նշեցինք, սահմանային իրադրություններում մարդը դուրս է գալիս առօրյա կյանքի սահմաններից և հաղորդակցվում բացարձակ կեցության, տրանսցենդենտալ ոլորտի հետ: Յասպերսի կարծիքով՝ մարդը մահը ընկալում է իբրև սահմանային իրադրություն ոչ թե սեփական, այլ իր հետ էկզիստենցիալ հաղորդակցության մեջ գտնվող մարդու մահվան դեպքում: Մարդու վիճակի ողբերգականությունն այն է, որ իր էկզիստենցիայի բացահայտումից հետո նա կրկին թաղվում է առօրյա կեցության մեջ: Այդ վիճակից դուրս գալու ելքը Յասպերսը տեսնում է հավերժական ու բացարձակ աշխարհի՝ Աստծո հետ մարդու կապի մեջ (4):

Էկզիստենցիալիստական փիլիսոփայության մեջ կենտրոնական տեղ է գրավում անհատի և հասարակության հարաբերակցության և էկզիստենցիայի ազատության հարցը: Այս պարագայում, հրեա-ամերիկյան գրականության ներկայացուցիչների գերխնդիրն էր, ինչպես նաև է, ամերիկյան հասարակության լիիրավ անդամ դառնալը՝ միաժամանակ չկորցնելով սեփական ինքնության հանդեպ ճանաչողական դեմքը: Էկզիստենցիալիզմն անհատապաշտական և սուբյեկտիվիստական փիլիսոփայություն է, որում անհատը ըմբռնվում է որպես ինքնաբավ ու բարձրագույն կեցություն: Անհատն ինքնանպատակ է, իսկ հասարակությունը՝ միջոց: Տեսականորեն հասարակությունը կոչված է ապահովելու անհատի ազատ զարգացումը, նրա իրավունքները, սակայն, իրականում հասարակությունը բացասական դեր է խաղում անհատի կյանքում՝ ճնշում է նրան, սահմանափակում նրա ազատությունը և դիմազրկում: Ժամանակակից հասարակությունն այնպիսին է, որ մարդը օտարվում է ինքն իրենից, հանդես գալիս որպես միջինացված երևույթ: Էկզիստենցիալիզմը ելնում է այն մտքից, որ մարդը ապրում է հասարակության մեջ, ուրիշ մարդկանց հետ, որ միայն ուրիշների հետ հաղորդակցվելիս է մարդը դառնում մարդ: Անդրադառնալով մարդկային հաղորդակցման խնդրին, Յասպերսը նշում է, որ իսկական հաղորդակցությունը հնարավոր է ոչ միայն Աստծո, այլ ուրիշ մարդկանց հետ: Միայն էկզիստենցիալ հաղորդակցության ժամանակ է մարդը բացահայտում իր իսկական կեցությունը: Ի տարբերություն հասարակական հաղորդակցության, որի ժամանակ մարդը հանդես է գալիս

որպես որևէ հանրության (ընտանիք, ազգ, պետություն) մասնիկ և մարդկանց միջև հաստատվում են արտաքին կապեր, էկզիստենցիալ հաղորդակցության ժամանակ մարդիկ իրար հետ հաղորդակցվում են որպես անկրկնելի անհատներ: Հայդեգերը և Սարտրը կարծում են, թե քանի որ հասարակական կյանքը օտարված, անդեմ հարաբերությունների ոլորտ է, ուստի ոչ այնքան հաղորդակցությունը, որքան սեփական գոյության մեջ խորասուզվելը կարող է մարդուն բավականություն պատճառել (3):

Էկզիստենցիալիզմը մերժում է մարդու ազատության մասին ինչպես ռացիոնալիստական-լուսավորական այն ավանդույթը, որն ազատությունն ըմբռնում է որպես անհրաժեշտության իմացություն, այնպես էլ բնապաշտական այն տեսությունը, ըստ որի՝ ազատությունը մարդու բնական ուժերի դրսևորումն է: Ազատությունը, ըստ էկզիստենցիալիզմի, հենց էկզիստենցիան է: Ազատ լինել, նշանակում է լինել ինքդ քեզ հետ: Սարտրի արտահայտությամբ՝ մարդը դատապարտված է լինել ազատ: Մարդը կարող է հրաժարվել իր ազատությունից, ինքն իրենից, դառնալ «ինչպես բոլորը» միայն այն դեպքում, եթե նա հրաժարվում է իր անհատականությունից: Մարդը ազատ է նույնիսկ այն ժամանակ, երբ ձգտում է ազատության՝ անկախ դրա իրագործման հնարավորությունից: Ազատ լինել, նշում է Սարտրը, նշանակում է ընտրություն կատարել, ընդ որում, ընտրության հաջողությունը կարևոր չէ ազատության համար: Հայդեգերը կարծում է, որ ազատ լինել, նշանակում է չգործել և չմտածել այնպես, ինչպես գործում և մտածում են ուրիշները, նշանակում է փնտրել և գտնել ինքդ քեզ: Ազատությունը չի նշանակում ամենաթողություն՝ անպատասխանատվության իմաստով: Եթե մարդը ամբողջությամբ տնօրինում է իր գոյությունը, ապա պարտավոր է պատասխան տալ իր բոլոր գործողությունների համար: Ընդսմին, նա պատասխանատու է ոչ միայն իր, այլ բոլորի համար: Այն, ինչ մենք ընտրում ենք, բարիք է մեզ համար, սակայն ոչ մի բան չի կարող իսկական բարիք լինել, եթե այն բարիք չէ նաև ուրիշների համար: Այս իմաստով պետք է հասկանալ «մարդը տագնապ է» արտահայտությունը (7): Ընտրող և իր ընտրությունը գիտակցող մարդը ընտրում է ոչ միայն իր սեփական կեցությունը, այլև ուրիշներինը, ուստի չի կարող չտագնապել իր ընտրության համար: Էկզիստենցիալիզմը մարդու ազատությունը կապում է ոչ միայն պատասխանատվության, այլև ակտիվության, նույնիսկ՝ խռովության հետ: Մշակելով «աբսուրդի փիլիսոփայություն», Կամյուն նշում է, որ ազատ է այն մարդը, որ հասկացել է կյանքի անիմաստ լինելը (7): Իսկ ազատություն ձեռք բերել, նշանակում է ընդվզել աբսուրդի դեմ: Առօրյա կյանքում ընդվզումը խաղում է նույն այն դերը, ինչ կասկածանքը դեկարտյան փիլիսոփայության մեջ: «Ես ընդվզում եմ, - գրում է Կամյուն, - հետևաբար մենք գոյություն ունենք» (7): Ընդվզումը

ինքնաարտահայտման և ինքնահաստատման գործողություն է: Միգուցե հենց այս ընդվզմանն են ձգտում նաև իրենց հրեականությունը դրսևորող գրողները, ում համար կարևոր է ազգային դրսևորման էկզիստենցիալ հարցերը: Նրանք ջանում են գտնել իրենց և իրենց հայրենակիցներին Ամերիկայի հոծ բազմության և բազմադեմ հասարակության մեջ: Այն ազգը, որը հիմք է հանդիսացել մի ամբողջ մարդկության կրոնական ճակատագրի կերտմանը, հանկարծ հայտնվում է այնպիսի իրավիճակում, երբ կա դրսևորվելու և կրկին ինքնահաստատվելու խնդիր:

Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ ԱՄՆ-ն հանդիսանում է աշխարհում միակ երկիրը, որն ընդունում է բազմաթիվ ազգերի մշակույթն ու չի խոչընդոտում դրանց զարգացմանը: Ամերիկյան գրականության պատմության մեջ մենք հանդիպում ենք հայ-ամերիկյան (Armenian-American), հրեա-ամերիկյան (Jewish American), աֆրոամերիկյան (African-American), լատինո-ամերիկյան (Latin American) գրականությունների սինթեզը, որը երևի թե պայմանավորված է ոչ միայն տվյալ ազգի մշակույթին նպաստելու, այլ նաև իր մշակույթին ձուլվելուն: Ամերիկան դարձավ այն ճանապարհը, որով հրեաները կարողացան առաջ ընթանալ և ճանաչում ստանալ ամբողջ աշխարհում: Հենց այդ ձուլման և միջավայրին խառնվելու տագնապն է համակել հրեա-ամերիկյան գրողներին, որոնց հերոսները գտնվում են էկզիստենցիալ փնտրտուքի մեջ, որպեսզի հանկարծ չկորցնեն իրենց եսն ու ազգային ինքնությունը: Նրանք գնահատում են Ամերիկյան դեմոկրատական հայացքները, ըստ որի նրանց թույլատրվում է ինտեգրվել ամերիկյան հասարակությանը որպես լիիրավ անդամներ, սակայն հենց այդ ինտեգրումն էլ նաև նրանց վախեցնում է, քանի որ ինտեգրման ճանապարհին մոռացվում է ազգայինը և ազգի ինքնությունը: Նրանց հերոսներն անընդհատ մոտենում են ամրիկյան հասարակությանը, փորձում ներս մտնել, սակայն մի ներքին մտավախությամբ ետ կանգնում այդ ամենից:

Արտագաղթի ընթացքում հրեաները իրենց համար ունեին բաժանարար սահմանագիծ բացասական Հին աշխարհի և Նոր աշխարհի փառաբանման միջև: Այս մշակութային զարգացումը արժանացել է բազմաթիվ քննադատությունների հրեա գաղթական գրողների կողմից: Շատ գրողներ մերժում էին այն անմարդկային արդյունաբերական աշխատանքային պայմանները, որոնց միջոցով հրեաները ստիպված էին անցնել 1882-1905 թվականների ընթացքում (5): Իսկ ահա 20-րդ դարի հրեա-ամերիկացի պոետները առավելապես կենտրոնանում էին գրական երկի գեղեցիկ և գրավիչ դարձնելու վրա, քան թե քաղաքական և պատմական հարցերը ներառել իրենց ստեղծագործությունների մեջ: Որպեսզի կարողանան առավել լայն ընթերցարան ունենալ, Արևելյան եվրոպական

հրեաները դադարեցին գրել իդիշ լեզվով: Այս հեղինակները կլանվեցին ամերիկյան մշակույթի մեջ՝ ինչ որ կերպ անտեսելով իրենց մշակութային ժառանգությունը: Սակայն այս ամենն այլ ընթացք ստացավ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Հեղինակները անհանգստացած էին Հոլոքոստի դաժան հետևանքներով, և ինքնությունը պահպանելու համար նրանք կրկին հանձն առան գրելու իդիշ լեզվով կամ եբրայերեն: Հոլոքոստի վերապրումը դարձավ հրեա-ամերիկյան գրականության համար թե՛ անձնական, թե՛ հավաքական ողբերգություն, որի միակ հաղթահարումը միասնության և ինքնության պահպանման մեջ էր: Ինքնության պահպանումը դարձավ կարևորագույն գերխնդիր, որն էլ արտահայտվում էր տարբեր դրամաներում, վեպերում, պոեմներում, և առհասարակ գրական երկերում:

**Եզրակացություններ**

Այսպիսով, ամփոփելով հետևյալ հոդվածի հիմնական դրույթները, մենք ցանկանում ենք նշել, որ 20-րդ դարի երկրորդ կեսի հրեա-ամերիկյան գրականությունը բազմիցս արտացոլել է ինքնության փնտրտուքի խնդիրը: Հրեաները երկրորդ երկրում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, տանում էին էկզիստենցիալ պայքար սեփական ինքնությունը պահպանելու համար՝ ամեն կերպ փորձելով չձուլվել և չկորցնել ազգային ես-ը: Դժվար և ծանր ժամանակները նպաստում են անհատի իրական ես-ի բացահայտմանը և կերտում նրան՝ որպես նոր տեսակ: Այս պատկերն արտացոլված է էկզիստնցիալ գրականության մեջ, և, հետևաբար, էկզիստենցիալ գրականության հերոսները դրա կրողներն են: Գրական ստեղծագործություններում պատկերված են երկու մշակույթներ, որոնցից մեկը ստիպողական կնիքի արդյունք է: Այսպիսով, պայմանականորեն կարելի ասել, որ հետևյալ գրականությունը արտացոլում է տրավմատիկ մշակութային արժեքներ: Էկզիստենցիալ գրականության ներկայացուցիչները արծարծում են թե՛ իրենց գենի/ներքին/ և թե՛ արտաքին խնդիրներ: Հենց այս խնդիրների բարձրաձայնման միջոցով է անհատի ինքնության որոնման գրականությունը փորձում ճանապարհ հարթել դեպի հոգեկան և հոգեբանական ազատություն: Ինքնության ճանաչումն ու ազատությունն անքակտելիորեն կապված են էկզիստենցիալիզմին: Հոլոքոստը դարձավ մեծագույն ողբերգություն հրեա ժողովրդի համար, ժողովուրդ, որը տանում է գոյաբանական պայքար և որի միակ հաղթանակը տեսանելի էր միասնության և ինքնության պահպանման մեջ:

## REFERENCES


1. Christine Daigle (2006), Existentialist Thinkers and Ethics, McGill-Queen's Press.
2. D.E. Cooper (1990), Existentialism: A Reconstruction, Basil Blackwell.
3. Ernst Breisach (1962), Introduction to Modern Existentialism, New York.
4. Jaspers, Karl (1955), Reason and Existenz. translated by William Earle. New York: Noonday Press.
5. Joseph Epstein (2004), “Fabulous small Jews”, Mariner Books.
6. Lavrin, Janko, Nietzsche (1971): A Biographical Introduction. Charles Scribner's Sons.
7. Ronald Aronson (2004), Camus and Sartre, University of Chicago Press, Chapter 3.
8. Хайдеггер М. (1989). Bytiye i vremya /Бытие и время / Being and time/, Пер. с нем. на груз. и предисл. Г. Тевзадзе; Гл. редкол. по худож. пер. и лит. взаимосвязям при Союзе писателей Грузии. — Тбилиси,.


**АНИ НЕРСЕСЯН**

## Проблема поиска идентичности и Экзистенциализма в контексте еврейско-американской литературы

### Заключение

**Ключевые слова и выразжения**: поиск идентичности, экзистенциализм, холокост, свобода, философия, литература, существование, индивидуал, общество, жизнь.

Следующая статья посвящена литературе по поиску идентичности и экзистенциализму. Мы обсуждаем проблему выявления реального существования человека, которая преимущественно проявляется в пограничных ситуациях. Раса является источником всех интеллектуальных и духовных творений народа и нации, которые именно сохраняют и развивают жизнь. Без самобытности расы невозможно быть уникальным и неповторимым искусством. И именно приверженность расе и генетические ценности сформировали и продолжают формировать еврейско-американскую литературу. Возможно, краеугольным камнем современности мысли в американской литературе является совокупность культур разных национальностей. Литература, включающая две культуры, занимает особое место в мировой литературе, где одна из них является результатом принудительной печати. Тема этой литературы не ограничивается геном,

расой или культурой, в основном она посвящена противодействию, которое представители одной нации получают, живя в чужой стране.

Герои экзистенциальной литературы-носители пограничных ситуаций. Холокост является именно той пограничной ситуацией для еврейского народа, которая ставит евреев перед проблемами потери идентичности, поиска и сохранения идентичности.

Таким образом, литература по поиску идентичности амхата пытается проложить путь к психической и психологической свободе. Литература, затрагивающая вопросы признания идентичности и внутренней свободы, напрямую связана с положениями экзистенциальной философии, а также экзистенциальной литературы, прямым носителем которой является еврейско-американская литература.

**Ani Nersesyan**

**The Problem of the Search for Identity and Existentialism in the Context of Jewish-American Literature**

**Conclusion**

**Key words and expressions**: Search for identity, existentialism, holocaust, freedom, philosophy, literature, existence, individual, society, life.

The literature on existentialists and the quest for identity is the focus of the following article. We talk about the challenge of determining a person's true existence, which primarily arises in ambiguous circumstances. All of the nation's and people's creative and intellectual output that sustains and advances life stems from race. Being a unique and inimitable work of art is impossible without the identity of the race. Furthermore, Jewish-American literature has been and will continue to be shaped by the dedication to race and genetic principles. The blending of cultures from several nations is perhaps the cornerstone of contemporary ideas in American literature. Literature that combines two cultures—one as a result of forced printing—has a unique position in the canon of world literature. This literature's subject is not restricted to genes, races, or cultures; rather, its primary focus is on the hostility that foreign-born citizens of one nation encounter.

Heroes in existential fiction are people who deal with gray areas. For Jews, the Holocaust is exactly the precarious scenario that presents challenges related to identity loss, identity search, and identity preservation.

Thus, the goal of the literature on identity quest is to create a path toward psychological and mental liberation. The ideas of existential philosophy and literature, which finds its direct carrier in Jewish-American literature, are closely

linked to works of literature that address questions of identity recognition and inner liberation.

**Անի Ներսեսյան-** Երևանի պետական համալսարանի ասպիրանտ, անգլերեն լեզվի դասախոս ՀՖԿՍՊԻ-ում, անգլերենի ուսուցչուհի «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՈՒՍՀ-ում և հմ. 135 հիմնական դպրոցում: Ուսումնասիրության թեման է հրեա-ամերիկյան գրականությունը՝ հանձին Նիլ Սայմոնի: Հեղինակ է 10 հոդվածի: annie.nersesyan@gmail.com

**Ани Нерсесян** - аспирантка ЕГУ, преподаватель английского языка в ГИФКСА, учительница английского языка Учебно-спортивного комплекса "Газпром Армения " и основной школы № 135. Тема исследования- еврейско-американская литература в лице Нила Саймона. 10 опубликованных статей по литературе, лингвистике и педагогике. annie.nersesyan@gmail.com

**Ani Nersesyan** - a graduate student at YSU, Lecturer of English language at ASIPCS, an English teacher at “Gazprom Armenia” Educational-sport complex and at state school No. 135. The research topic is Jewish-American literature represented by Neil Simon. 10 published articles on literature, linguistics and pedagogy: annie.nersesyan@gmail.com

***Խմբագրություն է ուղարկվել 20.10.2023թ.***
***Հանձնարարվել է գրախոսության 01.11.2023թ.***
***Հրապարակման է ներկայացվել 10.01.2024թ.***